դաշնակցական խմբապետները պահանջում էին զենքերը ցած դնել ու հանձնվել հաղթողների ողորմածությանը։ Այն ժամանակ, երբ Բաքվի բանվորները բոլշևիկների ղեկավարությամբ կատաղի և օրհասական կռիվներ էին մղում ռազմաճակատում, դաշնակները, Լևոնները ու մենշևիկները նենգ ու խարդախ միջոցներով Բաքուն հանձնեցին անգլիական իմպերիալիստներին, իսկ ավելի ուշ՝ թուրքական ջարդարարներին։

Ալսպիսով, չնայած բոլշևիկների հերոսական ջանքերին, Բաքուն ընկավ, և ընկավ հենց դաշնակների, Լևոնների ու մենշևիկների քայքայիչ աշխատանքի ու դավաճանության հետևանքով։ Բաքվի 1918 թ. ողբերգական անցքերի համար պատմությունը անարգանքի սյունին է գամել ինչպես մենշևիկներին, Լևոններին, այնպես էլ դաշնակներին։ Այս բոլորից հետո, միանգամայն պարզ է, որ պարոն Լազյանը նենգափոխում է պատմությունը և փորձում է ամեն ինչ գլխիվայր ներկայացնել։

Դ. Լազյանը անվերապահորեն հայտարարում է, թե 1918 թ. ստեղծվեց դաշնակների «ազատ և անկախ» ռեսպուբլիկա, որը ունեցավ «իր խորհրդարանը, ազգային բանակը, համալսարանը, կրամանիշը, ազատ ռամուրը» և այլն։ «Հայաստանի ժողովուրդը և արտասահմանի բոլոր հայերը,— շարունակում է հեղինակը,— անխախտելիորեն ոգևորության մեջ էին. արագ կերպով կը բարգավաճեր հայրենիքը, որուն համար նոր դարաշրջան մը կը սկսեր» (էջ 230)։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում «բարգավաճող» դաշնակցական Հայաստանը։ Շատ չերկարացնելու համար բերենք միայն մի բանի փաստ։ 1919 թ. մայիսի 17-ին Երևանում հրատարակվող «Աշխատանք» թերթը Հայաստանում տիրող դրության մասին գրում էր.

«Ժողովուրդը կմեռնի, ոչ մի տեղեն հուսո նշույլներ կերևին։ Երեք օրվա թաղված մեռելներու միս, փողոցների վրա վալօրոք ձգած կոլիկներու և արեխներու կառներ, կատու, շուն, արագիլ սովորական կերակուր են դարձած ժողովրդին համար։ Բայց ասոնք ալ սպառեր են և ամենքը դաշտ ելեր և բառիս բուն նշանակությամբ անասունի նման կարածան։ Երեկ հանդիպեցանք Այնթափ-Քոշկեցի Սարգիս Մանուկյանին, որը յուր հինգ տարեկան մեռած երեխայի փորը գատարկած և հեռադրալարը պարանոցին անցուցած թեժ թոնրի մեջ կխորովեր և կուտեր։ Նման իրողություններ նոր չեն և պատահած են Քիլագարխ և Մոլլա-Բայազետ գյուղերու մեջ ալ։ Բայց դաժան սովը ամենեն շատ բնամատնհայ փախստականներու մեջ նվաճումներ բրեր է»։

Դրությունը նույնն էր նաև մեկ տարի հետո՝ 1920 թ.։ Դաշնակցական «Հառաջ» թերթը 1920 թ. հունվարին հայտնում էր.

«Հունվարի 5-ին Երևանում փողոցներից հավաքված է 3 դիակ, տներից՝ 10 դիակ և հիվանդանոցներից՝ 52, ընդամենը՝ 65։ Այսպես է հաղորդում փողոցներում փակցված պաշտոնական բյուլետենը։ Մի բոպե փորձեցեք կենտրոնանալ այս թվերի վրա՝ օրական 65 դիակ միայն մայրաքաղաքում՝ պետության աչքի առջև. հապա ինչ է կատարվում գավառում, հետ ընկած անկյուններում, ասենք մի Դարալագյազում կամ Նոր-Բայազետում։ Սովն ու ցուրտը հնձում են անխնա ու անհաշիվ։ Եվ ամեն օր գերեզման են իջնում հազարավոր կյանքեր»։

Նույն թերթը խոսելով Ալեքսանդրոպոլի Պոլիգոնում կուտակված բազմահազար արևմտահայերի մասին, գրում էր.

«Ամբողջ 25 հազար ժողովուրդ Պոլիգոնում օրեցօր, ժամեժամ իր շարքերն է նոսրացնում։ Քաղաքի բթի տակ՝ երկու վերստի վրա համատարած զուլում է թագավորում։ Սովն ու ցուրտը հնձում են մարդկային կյանքերը։ Թշվառությունն աննկարագրելի է։ Անցեք Պոլիգոն և տեսեք. շարան-շարան սարսափելի տեսարանները մթագնում են մարդկային գիտակցությունը։ Երիտասարդ կյանքերը մերկ ու քաղցած իրենց վերջին տանջանքն են ապրում կեղտոտ ցնցոտիների մեջ։ Ամեն քայլափոխում կմախքացած կանանց ու ուժասպառ մանուկների գրասենյակ աղաղակն է թնգում.

— Անոթի ենք, անոթի...

— Մեռանք անոթությունից...

— Հիվանդացանք անոթությունից...

— Հա՞ց, փշուր մը հա՞ց...

Դանթեի նկարագրած դժոխքի տանջանքների իրականությունն է այդ Պոլիգոնը, որ՝ այսօր վերածվել է մի սոսկալի սիրտ կտրատող գերեզմանոցի, ուր 25 հազար ժողովրդի բախտի վրա սև խաչ է գրված»։

Այժմ մի երկու փաստ դաշնակների «ազատ և անկախ հանրապետության» մասին։ 1919 թ. դեկտեմբերին Հ. Քաջազնունուն ուղղված իր մի նամակում դաշնակ շեֆ Ա. Խատիսյանը գրում էր.

«Ամերիկացիք սկսել են վերջին ժամանակներս իրենց իրավունքը համարել միջամտել մեր ներքին գործերին այնպիսի չափերով, որ ուղղակի խանգարում են մեր ադմինիստրացիայի անկախ գործունեությանը։ Նրանք կազմում են իրենց հատուկ միլիցիան, ձգտում են իրենց ձեռքն առնել պարենավորման բոլոր գործը և այլն»[1]։

[1] «Հորիզոն Հայաստանի». 1921, № 279։

1920 թ. մարտին դաշնակցական կառավարության ներքին գործոց մինիստրության գաղտնի գրություններից մեկում ասված է.

«Սույն մարտի 17-ին Նոր-Բայազետի ընակիչ Բալաչյաղլյանը և Հարությունյանները հեռագրում են, որ իրենցից Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները Օրդաբլու գյուղում բռնի կերպով խլել են 17 գլուխ ասավար»[1]։

Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրության հասցեով ուղղված նամակում 1920 թ. ապրիլին մի խումբ երևանցիներ գրում էին.

«Երևանի մեջ ամերիկյան կոմիտեն իր առանձին բանան ունի, ուր ընչին պատճառների համար կրանտարկվեն մեր ընկերները ու պետության քաղաքացիները»[2]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ամերիկյան իմպերիալիստների գաղութ դարձած և սովի ճիրաններում գալարվող Հայաստանը դաշնակ պատմագրության գրչով ներկայացվում է որպես «աղտոտ ու անկախ», որպես «բարգավաճող» երկիր։ Մի՞թե կարելի է սրանից ավելի մեծ սուտ հորինել։

Գրքի հեղինակը մի շարք առիթներով խոսում է այն մասին, որ իբր բոլշևիկները, Սովետական իշխանությունը ունեցել են վնասակար «Թրքասիրություն», թուրքական օրիենտացիա։ Չկարողանալով գեթ որևէ չափով հիմնավորել իր այդ պատարկաբան հայասարարությունը, նա միաժամանակ փորձում է ընթերցողներից թաքցրնել պատմական այն ճշմարտությունը, որ հենց իրենք դաշնակներն էին, որ ոտնահարելով ժողովրդի կենսական շահերը ու ամեն մի սկզբունք, փարում էին թուրքական ջարդարարներին և լիզում նրանց գարշապարները։

Հայտնի է, օրինակ, որ 1920 թվականի աշնանը, երբ Հայաստանում ծավալվող բանվորագյուղացիական շարժումը սպառնում էր տապալել դաշնակների ու նրանց իմպերիալիստական տերերի իշխանությունը, դաշնակցական պարտիան ձեռք մեկնեց թուրքական զավթիչներին։ Դաշնակները լայնորեն քարոզներ կարդացին այն մասին, որ հայ ժողովուրդը պետք է ունենա թուրքական օրիենտացիա։ Դաշնակցության պաշտոնական օրգան «Հառաջ» թերթը 1920 թվականի նոյեմբերի 20-ի «Հաշտության խնդիրը և մեր օրիենտացիան» խմբագրականում գրում էր, որ հայ ժողովուրդը «պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի ժամանակ դաշնակների և թուրքական զավթիչների միջև տեղի ունեցած զինված ուժերի համագործակցություն ընդդեմ Սովետական իշխանության, ընդդեմ հայ ժողովրդի։ Այդ օրերին «Ազատ Հայաստան» դաշնակցական թերթը լիապարբերաբար քարոզներ էր կարդում այն մասին, որ հայ ժողովրդի պաշտպանը Թուրքիան է, որ նրա հետ պետք է գնալ։ Նշված թերթը, օրինակ, գրում էր.

«Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը»։

Նույն այդ թերթի 1921 թ. մարտի 20-ի առաջնորդողում ասված է.

«Անխուսափելի է դառնում տաճիկների ու բոլշևիկների բախումը։ Այդ բախման ժամանակ Անդրկովկասի բոլոր ժողովուրդները պիտի լինեն տաճիկների և ոչ բոլշևիկների հետ»։

Հայտնի է, որ Հայաստանից դուրս վռնդվելուց հետո դաշնակները ավելի մոտեցան թուրքական ռեակցիոն շրջանների հետ։ Այս բոլորի մասին խոսքեր խորը լռություն է պահպանում։

Ավելորդ և խիստ ծանծրալի կլիներ կանգ առնել բոլոր այն հերյուրանքների վրա, որոնցով լիքն է Գ. Լազյանի գիրքը։ Բերված օրինակներն էլ բավական են ցույց տալու, թե ինչպես գրքի հեղինակը կեղծում, նենգափոխում է պատմական փաստերն ու իրողությունները։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

[1] Տես. ՍՍՌ պետ. արխիվ, ֆ. արտաքին գործերի մինիստրություն, գ. 1827, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 42։

Բ. Մ. ԿՆՈՒՆՅԱՆՑ, *Ընտիր երկեր*, 1903—1911 թթ., Հայպետհրատ, Երևան, 1958, 467 էջ։

Б. М. КНУНЯНЦ, *Избранные произведения*, 1903—1911 гг., Айпетрат, Ереван, 1958, 467 стр.

Կնունյանցը լենինյան հին գվարդիայի պանծալի կաճառի այն ռևոլյուցիոներներից է, որոնց ողջ կյանքն ու գործը պրոլետարիատին անձնվիրաբար ծառայելու փայլուն օրինակ է։

Ռևոլյուցիոն շարժմանը Բոգդան Կնունյանցը հարել է անցյալ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից, Պետերբուրգում մտնելով ՌՍԴԲՊ շարքերը։ Կնունյանցը եղել է Անդրկովկասի

սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների նախաձեռնողներից ու ղեկավարներից մեկը, ՌՍԴԲՊ II համագումարի պատգամավոր՝ լենինյան «Իսկրայի» գործակալն ու աշխատակիցը, ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեի գործակալն ու անդամը, ՌՍԴԲՊ (բոլշևիկների) Մոսկվայի և Պետերբուրգի կոմիտեների անդամ, ՌՍԴԲՊ համագումար հրավիրելու լենինյան ծրագրի իրականացման համար մղվող պայքարի ակտիվ մասնակից, Կենտկոմի ագիտատորների կոլեգիայի ղեկավար, բոլշևիկների կողմից բանվորների դեպուտատների պետերբուրգյան առաջին սովետի և նրա գործադիր կոմիտեի անդամ, ուր նա վճռական պայքար էր մղում մենշևիկյան ղեկավարության դեմ։

Կնունյանցը փայլուն հրապարակախոս էր, պրոպագանդիստ և ագիտատոր։ Նա հանդես է եկել տարբեր կեղծանուններով՝ Ռուսով, Կավկազց, Բ. Ռադին, Բ. Պետրով, Բ. Պետրով—Ռադին, Բ. Ռուբին, Բ. Ռ., Ռ., Բոգդան և այլն։

Հանուն ժողովրդի երջանկության պայքարի կրքոտ մարտիկի եռուն լարումով և վտանգներով լի կյանքն ընդհատվեց 1911 թ. Բաքվի բանտում, 71 և կես ամսյա բանտարկությունից հետո, 33 տարեկան հասակում։

Կնունյանցի ռևոլյուցիոն գործունեությանը ընթերցողը կարող է ծանոթանալ նրա «Ընտիր երկերի» ժողովածուի միջոցով, որը հրատարակության է պատրաստել ՍՄԿՊ ԿԿ կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը։

Ժողովածուն կազմողներ, պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Ինճիկյանը (աշխատանքի ղեկավար և խմբագիր), Գ. Հալոյանը և Յու. Մռավյանը մեծ և բծախնդիր աշխատանք են կատարել։ Ժողովածուի մեջ են մտել Կնունյանցի ամենից կարևոր աշխատությունները։ Գրքում զետեղված է բովանդակալից առաջաբան, որտեղ բացահայտվում է պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ-բոլշևիկի բազմակողմանի գործունեությունը։ Ժողովածուն ունի հանգամանորեն կազմված ծանոթագրություններ, իսկ հավելվածում տրվում են Կնունյանցի կյանքի և գործունեության կարևորագույն տարեթվերը։

«Ընտիր երկերում» ընդգրկված հոդվածները վերաբերում են հարցերի լայն շրջանի և լուսաբանում են բոլշևիկյան պարտիայի գործունեության տարբեր կողմերը։ Եվ այդ շնորհիվ այն բանի, որ Կնունյանցը ջերմորեն արձագանքում էր արդիականության հրատապ հարցերին։ Կնունյանցի հոդվածները նկարագրում են ռևոլյուցիոն պայքարի, ժողովրդական մասսաների քաղաքական իրազեկության, ցարիզմի սոցիալական և ազգային դանդի դեմ պայքարը Ռուսաստանում, տալիս են տարբեր պարտիաների և դասակարգերի դիրքորոշումն ու դերը ռևոլյուցիայի մեջ, պատմում Ռուսաստանի ռևոլյուցիոն անցյալի մասին. դրանք կենդանի էջեր են ռևոլյուցիոն բանվորական շարժման և մեր պարտիայի պատմությունից։ Միաժամանակ այդ աշխատությունները վկայում են, որ Բ. Կնունյանցը եղել է բանվորական շարժման ականավոր գործիչ և Կոմունիստական պարտիայի շինարարներից մեկը։

Կնունյանցի հոդվածներն ու ելույթները աչքի են ընկնում նպատակասլացությամբ և գաղափարական հագեցվածությամբ։ Նրա գրչին հատուկ են առույգ, վստահ և համարձակ ոճը, վճռական հավատը պրոլետարիատի պայքարի հաղթանակի նկատմամբ։

Ժողովածուն սկսվում է ՌՍԴԲՊ համագումարում Բ. Կնունյանցի արտասանած ճառերով, որոնք հիմնականում նվիրված են նոր տիպի պարտիայի ստեղծման արմատական հարցերին։ Համագումարում արտասանած նրա ճառերը բարձր են գնահատվել Վ. Ի. Լենինի կողմից։ Իր «Մի քայլ առաջ երկու քայլ հետ» գրքում Լենինը բանիցս վկայակոչում է Կնունյանցի ճառը։ Բացահայտելով ներպարտիական տարաձայնությունների արմատները համագումարում, Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս, «բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել պարտիական պառակտման պատճառները և դատել նրա արմատները համագումարում Մ. Նարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց»[1]։

«Պարտիայի II համագումարի արդյունքների մասին» ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեին ուղղած իր նամակում, Կնունյանցը, որպես այդ կազմակերպության պատգամավոր, հաշվետու է լինում նրա առաջ և տալիս տարբեր խմբերի միջև համագումարում ծավալված պայքարի իսոր վերլուծություններ, հիմնավորում իր դիրքավորումը (էջ 57—66)։

Կնունյանցը համոզված պրոլետարական ինտերնացիոնալիստ էր։ Իր հոդվածներում նա մերկացնում էր ցարիզմի ազգային-գաղութային բաղաքականությունը, բացահայտում բուրժուական նացիոնալիզմի արմատները, պրոլետարական ռևոլյուցիոն շարժման նկատմամբ վերջինիս թշնամական էությունը։

Ինչպես իրավացիորեն նշվում է ժողովածուի առաջաբանում, Կնունյանցն այն առաջին սո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 399—400։

ցիալ-դեմոկրատներից էր, որոնք մարքսիստական ճիշտ դիրքերից էին արտահայտվում նացիոնալիզմի դեմ, առաջ էին քաշում և հիմնավորում միասնական, ինտերնացիոնալիստական սոցիալ-դեմոկրատական պարտիայի ստեղծման անհրաժեշտությունը։ Դեռևս II համագումարում ազգային հարցի առթիվ Կնունյանցը պաշտպանում էր լենինյան դիրքորոշումը։ Նա պաշտպանեց ժողովուրդներին ազգային ինքնորոշման իրավունք (ընդհուպ մինչև պետականորեն անջատվելը) տալու պահանջը, վճռականորեն դեմ դուրս գալով Բունդի սեպարատիզմին և նացիոնալիզմին, որը դնում էր կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը։ «Իմ կարծիքով,— ասել է Կնունյանցը,— այն տենդենցը, որն այժմ իշխում է Բունդում, սոցիալիզմի հետ ընդհանուր ոչինչ չունի» (էջ 17)։ Այնուհետև, պաշտպանելով միասնական սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա ստեղծելու սկզբունքը, Կնունյանցն ասել է. «Ես գտնում եմ, որ պարտիայի յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի ողջ պրոլետարիատի ներկայացուցիչը։ Իսկ եթե յուրաքանչյուր մեր պատգամավորի մենք դիտենք որպես պրոլետարիատի ազգային խմբերի ներկայացուցիչ, ապա ես պետք է ինձ համարեմ Կովկասում բնակվող ռուս, վրացի, հայ, թաթար և հրեա պրոլետարիատի ներկայացուցիչ, բայց ես հաճույքով հրաժարվում եմ այդ երկար տիտղոսից, որպեսզի կրեմ Ռուսաստանյան պրոլետարիատի ներկայացուցչի պատվավոր կոչումը» (էջ 20)։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպման ինտերնացիոնալիստական սկզբունքի մասին Կնունյանցը արտահայտվել է մի շարք հոդվածներում։ Այսպես, «Մեր տակտիկայի և կազմակերպության մի քանի հարցերը» հոդվածում, որ լույս է տեսել «Իսկրա» թերթում, Կնունյանցը նշել է, որ նացիոնալիզմը «պրոլետարիատի թշնամիների ձեռքում հանդիսանում է ռեակցիոն մի զենք, որը խանգարում է բանվորական մասսաների դասակարգային միավորումը» (էջ 56)։ Նա գրել է, որ «միայն միավորվելով միասնական, միանգամայն ինքնուրույն պարտիայի մեջ, առանց ազգային խորթականության, Ռուսաստանի պրոլետարիատը կարող է դառնալ այն զորեղ քաղաքական ուժը, որն ընդունակ կլինի երկրի բոլոր ռևոլյուցիոն ուժերի իսկական ավանգարդը դառնալ և վերջնականապես ջախջախել ինքնակալությունը» (էջ 56)։

Կնունյանցը համարձակ և ուժեղ կամքի տեր ռևոլյուցիոներ էր, նրան չէին կարող ընկճել ցարիզմի ռեպրեսիաները։ 1905 թ. մարտի 31-ին, Մոսկվայի դատական ատյանի փակ նիստում նրա արտասանած ճառը գրավել է Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի ուշադրությունը։

Դատավարության ժամանակ Բ. Կնունյանցն իրեն պահեց աներեր, համարձակ և հպարտ, արհամարհանքով դիմելով ցարական դատարանին։ Դատավորների ներս մտնելու ժամանակ նա դեմոնստրատիվ կերպով ոտքի չկանգնեց։ Իսկ երբ դատարանի նախագահը «մատնանշեց, որ ինքն իրավասու է ուժով ստիպել նրան ենթարկվելու օրենքի պահանջներին, հեռացնել մեղադրյալին դատավարության դահլիճից և այլն» (էջ 71), Կնունյանցը պատասխանում է, որ «...մտադիր չէ ենթարկվել ռուսական օրենքների պահանջներին, կանգնելու և նստելու է երբ ինքը կցանկանա և դեմ չէ դահլիճից հեռացվելուն, քանի որ դատարան է ներկայացել ոչ թե կամովին, այլ հարկադրաբար» (էջ 71)։

Կնունյանցի դատավարությունը վերածվեց ցարիզմի դեմ դատի։ Իր փայլուն ճառում Կնունյանցը մերկացրեց ռուսական ցարիզմը և նրա դատարանը։ «Մենք անարխիստներ չենք,— հայտարարեց Կնունյանցը,— և ռուսական թագավորական դատարանը մեր կողմից չընդունելը բխում է ոչ թե պետության և նրա բոլոր հիմնարկների անարխիստական ժխտումից, այլ այն յուրահատուկ բնույթից, որն ընդունել է մեր դատարանը, շնորհիվ Ռուսաստանում տիրող ոստիկանական ռեժիմի» (էջ 73)։ Դիմելով դատարանին, Կնունյանցն այնուհետև ասում է, որ Ռուսաստանում բարձրացած ռևոլյուցիոն փոթորիկը երկրի երեսից կսրբի այդ «...բարբարոս ռեժիմը, որպեսզի ազգի ստեղծագործ ուժերին հնարավորություն տա ստեղծելու քաղաքական նոր ձևեր, որոնք ավելի կհամապատասխանեն նրա պահանջներին» (էջ 79)։ Իր ճառը Կնունյանցն ավարտեց մարգարեական խոսքերով. «Դուք դատում եք ռևոլյուցիոների այնպիսի մի պահի, երբ դուրսը ռևոլյուցիա է, դուք պաշտպանում եք մի ռեժիմ, որը պատմության կողմից դատապարտված է կործանման։ Դե դատեցեք, դատավորներ, իսկ մեզ և ձեզ ռևոլյուցիան կդատի» (էջ 84)։

Կնունյանցի ճառը ցարիզմը մերկացնող փայլուն փաստաթուղթ էր։ Լենինի ցուցումով այդ ճառը հրապարակվեց որպես «Вперед» թերթի 1905 թ. ապրիլի 17-ի համարի առանձնատիպ՝ «Դատավարության դատավարությունը» վերնագրով։ Այնուհետև այն հրատարակվեց պարտիայի Մոսկվայի, Բաքվի և մյուս կոմիտեների կողմից։ Կնունյանցի ճառը քանիցս վերահրատարակվել է շատ լեզուներով։

Ուշադրության արժանի է ժողովածուում զետեղված Կնունյանցի մի այլ ճառը՝ արտա-

սանված Բանվորների դեպուտատների Պետերբուրգի սովետի գործունեության ժամանակ, 1906 թ. սեպտեմբերին։ Այդ ճառում ցարական Ռուսաստանը նա անվանում է «ոստիկանական պետություն» (էջ 322)։

Մի շարք աշխատություններում («Ս.— Պետերբուրգ, 18-ը օգոստոսի», «Առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունների բոլոր տերերին», «Ցարական մանիֆեստն ազատության մասին և մեր պահանջները», «Կազմակերպման մասին», «Դիմակը պատռված է», «Ճառ Պետերբուրգի Սովետի նիստում 1905 թ. նոյեմբերի 1-ին», «Ռեալյուցիան մոտենում է», «Բանվորների դեպուտատների առաջին սովետը» և այլն) Բ. Կնունյանցը ցույց է տալիս ռուսական առաջին ռեալյուցիայի թափը և մերկացնում բուրժուա-գալվածատիրական պարտիաների գործունեությունը։

Նշելով 1905 թ. ընդհանուր քաղաքական գործադուլի հաջողությունը, «Կազմակերպման մասին» հոդվածում Բ. Կնունյանցը գրում է «Հենվելով այդ հաջողությունների վրա, պրոլետարիատը պետք է համախմբվի, կազմակերպվի, զինվի և պատրաստվի վերջնական գրոհի վճռական մոմենտին։ Կազմակերպվել, միավորվել, խմբավորվել պրոլետարական դրոշի շուրջը, ստեղծել համախմբված մարտական բանակ՝ սա է օրվա հերթական խնդիրը» (էջ 84)։

Ցափազանց հետաքրքիր է 1905 թ. նոյեմբերի 1-ին Պետերբուրգի Սովետի նիստում Կնունյանցի արտասանած ճառը ի պաշտպանություն Լեհաստանի, որը ցարական կառավարության կողմից հայտարարված էր ռազմական դրության մեջ։ «Ես գտնում եմ,— ասել է Կնունյանցը,— որ արտահայտած կլինեմ մեր բոլորի միտքը, եթե ասեմ, որ լեհական և ռուսական պրոլետարիատի պայքարը ընդհանուր պայքար է «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» նշանաբանով։ Այն գործը, հանուն որի պայքարում է լեհական պրոլետարիատը՝ մեր գործն է. այն գործը, որի համար պայքարում ենք մենք նրա գործն է, այդ պատճառով էլ մենք պատրաստ ենք ձեռք մեկնել լեհական պրոլետարիատին հանուն մեր ընդհանուր պայքարի... և մենք, ռուսական և լեհական պրոլետարիատը, ձեռք-ձեռքի պետք է լարենք բոլոր ուժերը վերջնականապես ջախջախելու համար ստելի միապետությունը, բոլոր ցարերին և նրանց գործակիցներին» (էջ 105—106)։

Պրոլետարիատի կազմակերպական և քաղաքական միասնության, ռեալյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի շուրջը նրա համախմբվածության դաղափարը Կնունյանցը պաշտպանել է նաև բոլշևիկների Պետերբուրգի կոմիտեի հրատարակած թռուցիկներում։ «Կազմակերպվե՛ք» թռուցիկում Կնունյանցը գրում էր, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի ղեկավարությամբ Ռուսաստանի պրոլետարիատը «եթե ոչ այսօր, ապա վաղը երկրի երեսից կջնջի ամեն մի կամայականություն և շահագործում» (էջ 121)։

Նշելով տնտեսական և քաղաքական պայքարի անհրաժեշտությունը, նրանց փոխադարձ կապը, «Արդյոք պե՞տք է բանվորին քաղաքական պայքարը» թռուցիկում Կնունյանցը գրել է. «Ով խորհուրդ է տալիս բանվորներին զբաղվել միայն տնտեսական պայքարով՝ բանվոր դասակարգի թշնամին է»։

Դիմելով բանվորներին, թռուցիկը կոչ էր անում. «Մղեք և՛ տնտեսական, և՛ քաղաքական պայքար, որոնք միասին տանում են դեպի վերջնական հաղթանակ բանվոր դասակարգի թշնամիների նկատմամբ, դեպի սոցիալիստական կարգերի հաստատումը երկրի վրա... Ռուսաստանի բանվորներ, միավորվեք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական մեկ պարտիայի մեջ բուրժուազիայի դեմ քաղաքական պայքար մղելու, սոցիալիզմին հասնելու համար» (էջ 146—147)։

«Պայքար ուղիղ բանվորական օրվա համար» հոդվածում և «Բանվորների դեպուտատների առաջին սովետը» բրոշյուրում ընդգծվում է Բանվորների դեպուտատների առաջին սովետի գործունեությունը և բացահայտվում ուղիղ բանվորական օրվա պահանջի սոցիալ-քաղաքական նշանակությունը։ «Սոցիալ-դեմոկրատիայի առաջադրած բոլոր պահանջներից,— գրում է Կնունյանցը,— ուղիղ բանվորական օրը միշտ էլ հատուկ ժողովրդականություն է ունեցել բանվորական լայն մասսաների շրջանում» (էջ 275)։

«Ինչպիսի ընտրական իրավունք է պետք բանվոր դասակարգին» բրոշյուրում, որ գրվել է 1905 թ. ամռանը և հրատարակվել 1906 թ., Կնունյանցը տալիս է բանվոր դասակարգի համար ընդհանուր ընտրական իրավունքի և քաղաքական ազատությունների անհրաժեշտության հանրամատչելի բացատրությունը։ «Պրոլետարիատը,— գրում է Կնունյանցը,— բուռն կերպով ձգտում է իշխանության, որպեսզի ոչնչացնի ունևոր դասակարգերի ուժը, ստեղծի բոլոր քաղաքացիների իսկական հավասարություն, վերացնի հասարակության բաժանումը դասակարգերի» (էջ 148)։

Ռուսական առաջին ռեալյուցիայի պարտությունը Կնունյանցին չվհատեցրեց։ «Դեկտեմբերյան տարեդարձ», «Հաղթողների հրճվանքը» հոդվածներում երևում է նրա հավատը դեպի ռեալյուցիան։ Ռեակցիայի պայմաններում նա

արտահայտվում է հոգուտ լեգալ հնարավորությունների, մասնավորապես գումայի ամբիոնի օգտագործման։ «Բարու» փորրիկ հոդվածում նա ցույց է տալիս Բաքվի մենշևիկների կազմալուծիչ, պառակտողական գործունեությունը։

«Երկրամայա աքսոր և փախուստ» հոդվածում նկարագրվում է նախկին Տորոլսկի նահանգի վիճակը։ Կնունյանցը մեծ ջերմությամբ ու երախտագիտությամբ է խոսում տեղական բնակչության հյուրընկալության և աքսորյալների նկատմամբ ցույց տրված հոգատարության մասին։ Նա գրում է. «Չնայած մեր՝ իրավազուրկ աքսորաբնակներիս և ադմինիստրացիայի կողմից հատկապես շարամիտ «հանցագործներ» ճանաչվածներիս բացառիկ դրությանը, տեղական բնակիչները նայում էին մեզ որպես ցանկալի հյուրերի և անում էին իրենցից կախված ամեն բան, մեր աքսորը թեթևացնելու համար» (էջ 339)։ Կնունյանցը նշում է, որ տեղական բնակչությունը թշնամաբար է տրամադրված ցարիզմի դեմ։ «Աքսորյալներին,— գրում է Կնունյանցը,— դիմավորում են որպես բարեկամների։ Կառավարության թշնամիներին՝ որպես ժողովրդական գործի իսկական պաշտպանների» (էջ 339)։

1907 թվականին, Շտուտգարդտում, Բոգդան Կնունյանցը 37 բոլշևիկ պատվիրակների հետ միասին, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, մասնակցում է II Ինտերնացիոնալի VII կոնգրեսի աշխատանքներին։ Այդ կոնգրեսի աշխատանքներին, օպորտունիզմի դեմ բոլշևիկների ու ձախերի մղած պայքարին է նվիրված Բոգդան Կնունյանցի «Նոր ինտերնացիոնալի VII կոնգրեսը» հոդվածը, որը լույս է տեսել ժնևում հրատարակվող «Радуга» բոլշևիկյան ամսագրում։

Մի շարք հոդվածներ («Դարձյալ «խորհրդակցության մասին», «Իսկական սոցիալիստները և խորհրդակցությունը», «Խորհրդակցության մասին», «Լիաղորյալների խորհուրդը և երաշխիքները») նվիրված են Բաքվի բոլշևիկների պայքարին հանուն բանվորների և նավթարդյունաբերողների խորհրդակցական կամպանիայի օգտագործման՝ պրոլետարիատի վիճակը բարելավելու համար։ Այս հոդվածներում Կնունյանցը մերկացնում է դաշնակների, մենշևիկների և էսերների պառակտողական կազմալուծիչ գործունեությունը, պարտիաների, որոնք դեմագոգիկ կերպով հանդես էին գալիս ընդդեմ խորհրդակցության նավթարդյունաբերողների հետ։ Կնունյանցը գրում է, որ խորհրդակցությունը կօգնի պրոլետարիատին կազմակերպվել, իսկ «կազմակերպված պրոլետարիատը դաշնակցության նման հաստատությունների ամենաոխերիմ թշնամին է» (էջ 421)։ Ժողովածուն ավարտվում է «Ագապ Զելոգան» մահախոսականով, նվիրված 25-ամյա նավաստի ռևոլյուցիոներին։ Դա Կնունյանցի վերջին հոդվածն էր գրված Բաքվի բանտի հիվանդանոցում։

Բ. Կնունյանցի Ընտիր երկերի ժողովածուն, որն արտացոլում է լենինյան հին գվարդիայի ականավոր ներկայացուցիչներից մեկի կյանքն ու ռևոլյուցիոն-հրապարակախոսական գործունեությունը, հետաքրքրությամբ կընդունվի ընթերցողների կողմից։

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ. ՄԵԼԻՔԱՐՅԱՆ, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևանի Պետական համալսարանի հրատարակչություն, 1958, 261 էջ։

Հայ պարբերական մամուլի հարուստ, բայց տակավին քիչ հետազոտված պատմության ուսումնասիրությունը, անտարակույս, արժանի է խրախուսանքի։ Այս առումով էլ շնորհակալ բայլ է կատարել բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մելիքարյանը, հրատարակելով «Հյուսիսափայլին» նվիրված իր ուսումնասիրությունը։

«Հյուսիսափայլին» առնչվող հարցերը շատ տարիներով են պարզաբանվել։ Ամսագիրը, նրա աշխատակիցները գրականության պատմության մեջ իրենց արժանի գնահատականն են ստացել։ Սակայն, չնայած դրան, «Հյուսիսափայլի» մասին առանձին ուսումնասիրություն դեռևս չի հրատարակվել։ Մինչև այժմ հանդամանորեն չի զուսարանվել «Հյուսիսափայլի» պատմությունը, չի պարզաբանվել նրա դիրքը ժամանակի մի ամբողջ շարք հրատապ հարցերում, չի որոշվել նրա տեղն ու արժեքը հայ ազատագրական մտքի, հայ գրականության և մամուլի պատմության մեջ։ Այդպիսի մի լուրջ փորձ առաջին անգամ ձեռնարկել է Մ. Մելիքարյանը՝ «Հյուսիսափայլին» առանձին մենագրություն նվիրելով։

Գիրքը ծավալուն է՝ 261 էջ, բաղկացած է հինգ գլուխներից, ունի առաջաբան։ Գրքին կցված հավելվածում զետեղված են երեք փաստաթղթեր, որոնք առաջին անգամ են հրատարակվում։ Հեղինակն իր աշխատությունը գրելիս լայնորեն օգտագործել է անցյալ դարի հայ, ինչպես նաև 60-ական թվականների ռուսական պարբերական մամուլն ու դրան նվիրված որոշ